



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇՒՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Գեղ. (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«12» դեկտեմբերի 2014 թվականի N 205-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՒՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 27-36-րդ հոդվածների դրույթներով և հիմն ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի նախագիծը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի, ծախսերի և եկամուտների հետևյալ հաշվեկշիռով՝

- 1) **Եկամուտներ՝ 3 124 729.4 (երեք միլիարդ մեկ հարյուր քսանչորս միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ,**
- 2) **Ծախսեր՝ 3 124 729.4 (երեք միլիարդ մեկ հարյուր քսանչորս միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:**

2. Բյուջեի կատարման սպասելի ընթացքում՝

- 1) որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկօրյա ժամկետում, սահմանել համայնքի բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները, բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաստատել համայնքային ենթակայության կազմակերպությունների պահպանման ծախսերի նախահաշիվները,
- 2) տարեկան բյուջեի և եռամսյակային բաժանմամբ հաստատված նախահաշիվները տրամադրել համայնքի բյուջեի կատարման սպասարկումն իրականացնող պետական լիազորված մարմնի համապատասխան տեղական գանձապետական բաժանմունքին:

3. Անհրաժեշտության դեպքում 2015 թվականի բյուջեով հաստատված հատկացումների ընդհանուր գումարի 15%-ի սահմաններում կատարել վերաբաշխում սույն որոշումով հաստատված ծախսերի գործառնական դասակարգման առանձին խմբերի և ենթախմբերի, ինչպես նաև ենթախմբերի ներսում, այն պայմանով, որ թույլ չտրվի սույն որոշմամբ յուրաքանչյուր ենթախմբի գծով նախատեսված հատկացումների կրճատում ոչ ավել, քան 20%-ի չափով կամ ավելացում 35%-ից ավելի չափով:

4. Թույլատրել համայնքի ղեկավարին կատարել բյուջեն հաստատելու մասին՝ համայնքի ավագանու ընդունած որոշմանը չհակասող վերաբաշխումներ: Կատարած փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել սույն որոշմամբ սահմանված չափաֆանակները:

5. Եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին ներկայացնել հաղորդումներ համայնքի ավագանուն:

6. Բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնել մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը:

7. Բյուջեի հաստատման մասին ավագանու որոշումը եռօրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ կերպով հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (16)

Գ. Աղանյան _____

Ա. Բաղեյան _____

Ա. Բաղրանյան _____

Ա. Գրիգորյան -----

Վ. Եղիզարյան -----

Գ. Թաթարյան -----

Հ. Կարապետյան _____

Տ. Հովհաննիսյան -----

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ. Մխիթարյան -----

Է. Մկրտչյան _____

Վ. Շիրինյան -----

Ե. Պողոսյան _____

Դեմ (0)

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

Ձեռնպահ(0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ԲԱՂԱՍԱՆՅԱՆ

Բ. Գյումրի
«12» դեկտեմբերի 2014 թ.